

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3

ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի 2023-2024 ուս. տարվա
գիտական խորհրդի առցանց հարցման կարգով նիստի

ք.Երևան

17 հոկտեմբերի 2023թ.

Ներկա էին՝ գիտխորհրդի 20 անդամներից 18-ը (ներկայաբերթիկը կցված է):

Նախագահ՝ ք.գ.թ., դոցենտ. Ա. Մկրտչյան

Գիտական քարտուղար՝ ք.գ.թ., դոցենտ Ա. Դադայան

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտից ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման մրցույթին մասնակիցների առաջադրման հարցը:

Զեկուցող՝ Ա. Դադայան

2. Ընթացիկ հարցեր:

ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ԵՎ ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտից ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման մրցույթին մասնակիցների առաջադրման հարցը:

Ելույթ ունեցավ՝ Գիտական խորհրդի քարտուղար, ք.գ.թ., դոցենտ Ա. Դադայանը, ով առցանց կարգով գիտխորհրդի անդամներին տեղեկացրեց, որ նշված մրցույթին մասնակցելու համար հայտ են ներկայացրել «Ֆարմացիա» կրթական ծրագրի մագիստրատուրայի ուսանողուհի Աննա Արմենի Գասպարյանը, բակալավրիատի առկա ուսուցման 3-րդ կուրսի ուսանողուհի Ռուզաննա

Արթուրի Բեկջանյանը և 2-րդ կուրսի ուսանողուհի Մանե Ալիկի Խաչատրյանը: Ելույթ ունեցան (առցանց կարծիքները հայտնելով) նաև գիտխորհրդի անդամներ կ.գ.թ. Ա. Հովհաննիսյանը, ք.գ.թ. Հ. Միմոնյանը, ք.գ.թ. Խ. Հակոբյանը, ովքեր նշեցին, որ հայտ ներկայացրած ուսանողները ուսումնառության ընթացքում ցուցաբերել են գերազանց առաջադիմություն և ակտիվ մասնակցություն ունեն ինստիտուտի հասարակական կյանքում:

Որոշեցին՝ Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհուրդը միաձայն որոշեց երաշխավորել Աննա Արմենի Գասպարյանին, Ռուզաննա Արթուրի Բեկջանյանին և Մանե Ալիկի Խաչատրյանին՝ ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման մրցույթին մասնակցելու համար:

2. Ընթացիկ հարցեր:

Նիստում ընթացիկ հարցեր չեն քննարկվել:

Գիտական խորհրդի նախագահ,

ք.գ.թ., դոցենտ՝

Ա. Մկրտչյան

Գիտական խորհրդի քարտուղար

ք.գ.թ., դոցենտ՝

Ա. Դադայան